

պիտոյ եմք Մարտիրոս վարդապետին, բարևք է, ապա թէ ոչ շուտով ժամանելոց եմ հրամանացդ մի տրտմիր, այլ ուրախ լեր, զի ահա անիծեալ նեոն կորեալ են յորջն իւրեանց, եւ ոչ ուրեք երեւին, յոյս ունիմք ի Քրիստոսէ որ ի սպառ կորնչելոց են ամենեքեան, զի ահա այսչափ վարդապետք վառեալք կամք ի սէր սուրբ աթոռոյդ (էջմհածնի) ամենեքեան մինչեւ ի մահ կ'աշխատիմք, հրամանացդ ազօթքն մեզ օգնական եւ պահպան եղիցի միշտ եւ հանապազ ամէն: Գրեցաւ թվին ՌՃԺԳ (1665) Ապրիլ ԺԸ (18). Իգնիմիտ:»

Նախ քանի մը ծանօթութիւններ նամակին մէջ յիշուած անձնաւորութեանց մասին: Նօխուստին (սիսեոի մարդ), (Եղիազար) եւ իւր աշակերտքն ի սպառ կամ Նօխուստու տղան եւայլն: Նօխուստին Անդրէաս երէցի որդի Մելքիսեդ երէցն է, որ յաճախ կը յիշուի Երեմեայ Քէօմիւրճեանի օրագրութեան մէջ իբրեւ կուսակցան, զինեմով հայհոյիչ մը, որ բանադրուած, կարգադուրկ եղած կը յիշէ: Մելքիսեդ երէց անգամ մը ծանր հայհոյանքներ եւ լեզուազարութիւն կ'ընէ Կ. Պօլսոյ եկեղեցւոյն մէջ Եղիազար Այնթապցիի գէմ, երբ գինով էր կ'ըսէ Քէօմիւրճեան, եւ երէցը բռնի դուրս կը հանուի եկեղեցիէն, Կ'երեւայ թէ 1665ին ատենները ան հակա-Եղիազարեան կուսակցութեան կը պատկանէր եւ Յակոբ Զուղայեցիի կողմը կը բռնէր: Գոնէ այս է սպառութիւնը Սահակ Վրդ. Ղըմպիկի այս նամակէն: Պայքարին հետեւանքով Մելքիսեթ Պուրսա կը փախչի: Հակա-Եղիազարեան խումբէն ըլլալու է նաեւ Տէլի (Խենթ) Պիշապարն զուցէ՝ պի(շիլականի) Ազար կամ Ազարիա, որ հաւանաբար երէց մը կամ վարդապետ մըն էր որ երկարնակ (Հոովմէադաւան) եղեր է ըստ երեւոյթին լքելով Յակոբ Զուղայեցւոյ կուսակցութիւնը: Կը յիշուի նաեւ Քացխուկն<sup>(7)</sup>: Նամակէն այնպէս կ'երեւայ թէ Յակոբ Զուղայեցիի կողմնակից մըն էր, թէեւ տարուրերուող

եւ ոչ վճռական ու հաստատ: Երեմիա Քէօմիւրճեանի հետ յիշուած Յովսէփն հաւանաբար Քէօմիւրճեանի որդին Յովսէփն էր, Եղիազարի կուսակիցներէն:

Նամակագիր Սահակ վարդապետ Ղըմպիկ կոչուած է Պառի (փոքր) Ղըմպիկ: Կ'երեւայ թէ վարդապետական դաւադանը ստացած է Յակոբ Կաթողիկոսէն:

Նոյն այս Սահակ Ղըմպիկէն ունինք երկրորդ նամակ մը: Կը թուի թէ Յակոբ Կաթողիկոսէն իր նիւթական ակընկալութիւնները չարդարացան: Որով նոյն տարին ան կը գրէ իր երկրորդ նամակը, այս անգամ ուղղեալ Եղիազար Այնթապցիին հակառակորդ՝ Յակոբ Զուղայեցիի:

«Շնորհազարդ եւ երջանկափառ... տեառն մերոյ Հայրապետի ամենայն Հայոց ի Եղիազար Կաթողիկոսի եւ Պատրիարքի սուրբ Երուսաղէմայ, նուաստ եւ սարուկ ծառայից ծառայէ խոնարհեալ երկրպագութիւն...: Գիտութիւն լիցի տէրութեան ձերում, եւ շնորհաւորութիւն պերականց աստիճան Հայրապետ եւ Կաթողիկոսիդ եղիցի. Աստուած բարով վայելել տացէ մինչեւ ի խորին ծերութիւն: Հայր սուրբ ահա այստեղս Միևտարնիս (Պաշտօնը Պատրիարք) կաշառ առեալ ի վաճառականացն եւ Բ (2) բանադրանաց թուղթ գրեաց վասն թո. Ա (1) ի Հալապ յղեաց եւ Ա (1) ի Ստանպօլ եւ մէկ թուղթ Երուսաղէմայ Աստուածատուր վարդապետին գրել կուտան բանադրանք վասն թո, եւ տէր Ղուկասին հետ ի Պուրսա կուղարկեն, որ բերէ ի Ստանպօլ Մարտիրոսին (Ղրիմեցի) տայ, արժան է որ չԱկօրն (Յակոբ Զուղայեցի Կաթողիկոսն) եւ չԱստուածատուրն չաւառնով (բարապան) կապանօք ի տեղդ բերել տաս, եւ նոցա պատիժն ի տեղդ հատուցանես զի արժան են մեծի պատժոյ: Ելնիի (ղեսպանի) ձեռօք կամին բան չինել, յորժամ տեղդ դայ պատրաստ կաց, եւ մի վախենար, զի այս տեղաց վաճառականքն մէկ ըստակ տուող չկայ: Ոչ փոխ կուտան եւ ոչ օղնութիւն կու հասնի Մարտիրոս Թաթարին (Ղրիմեցին), այլ մեծամեծ համ-

(7) Քացխուկ ներսէս վարդապետ Հոովմէայեցի նախկին ծանօթ եւ բարեկամ Եղիազարի: